Եւ յետ անցանելոյ աւուրց ինչ, եկ հրովարտակ յԱրքայէ վասն եկեղեցւոյն Բեթղեհէմի՝ և տուաւ Հայոց, յորում պատմին երկար բանիւք բովանդակ խմաստ հրովարտակին Սէլիմայ և Մահմուտայ Արքայից, և զանցս մեծի դատին Ցունաց։ Այս 'ի մէջ բերէ զհրովարտակն նորոգութեան, յորում դարձեալ յականէ և յանուանէ որոշելով զտեղիս իւրաքանչիւր ազգաց, զբաժանորդս և զսեփհականս, բաց 'ի Լատինաց, թէ 'ի տաճարին Ս. Ցարութեան եւ թէ յեկեղեցին Բեթղեհէմի, յաւելու ասել՝ «Զի թէպէտ ընդհանուր նորոգութիւնն յանձն եղեւ Ցունաց՝ այլ ոչ երբէք տիրել, սեփհականել և բռնաբարել զիրաւունս իւրաքանչիւր ազգի, եւ ոչ զդուզնաքեայ իրս ինչ. այլ կալ մնալ իւրաքանչիւր ոք 'ի սեփհական տեղիս իւր, որպէս եւ էին, կատարել զօրէնս 'ի բաժանորդ տեղիս ընկերութեամբ՝ և 'ի սեփհական տեղիս անկախութեամբ։ Բայց յեկեղեցիս և 'ի բնակարանս Լատին կղերաց չմերձենալ. զի ոչ յանձն առին նոքա 'ի ժամանակի քննութեան լինել ներկայ, և զտեղիս իւրեանց ոչ կամեցան տալ նորոգել Ցունաց»։ Ցետ գրելոյ զայս ամենայն բացորոշ, դարձուցանէ զբանս իւր առ Դատաւորս Երուսաղէմի եւ ասէ. «Արդ եթէ Ցոյնք զընդհանուր նորոգութիւնն պատճառելով, և իբրեւ ամուր ապաստանի և նեցուկ անխորտակելի յեցեալ 'ի նա, 'ի սկզբան նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի զառաջին ձեւն այլայլեալ են, և նորանոր իրս հնարեալ, զբաժանորդութիւնն ընդ Հայոց բոլորովին ուրացեալ, զայս և զայն տեղի մերէ ասելով՝ զբովանդակ եկեղեցին յափշտակելոյ եւ տիրելոյ գուն գործեն և 'ի սիւնազարդ սրահն եկեղեցւոյ նորանոր կանթեղս կախեն, ուր չէ լեալ այնպիսի ինչ 'ի սկզբանէ անտի. եթէ արդարեւ այնպէս իցէ, որպէս ծանուցին Դատաւորն եւ կրօնաւորք Հայոց, բառնալ և խափանել զանդգամութիւնս ազգին Ցունաց, և այսուհետեւ չտալ տեղի կռուոյ և հակառակութեան. զի ընդդէմ է օրինաց եւ Կայսերական հրամանիս։ Եւ եթէ 'ի նորոգութեան սրահու յեկեղեցին Բեթղեհէմի, նորահնար իրս ինչ արարեալ իցեն՝ կարգաւորել զայն ըստ առաջին դրից, և ըստ մտաց հրովարտակաց, որ 'ի ձեռս երկաքանչիւր ազգի՝ բաժանորդութեամբ